ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

***Երևանի Աջափնյակ վարչական շրջանի լուկաշինի փողոց 37/54 հասցեում բենզալցակայանի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային լսումների***

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք ՀՕ-150-Ն, խմբ. 3.05.24թ.) և ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ 2025թ. սեպտեմբերի 23-ին ժամը 11:00-ին՝ Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի նստավայրում տեղի է ունեցել քաղաքացի Արթուր Հարությունյանի կողմից փորձաքննության ներկայացված՝ Երևանի Աջափնյակ վարչական շրջանի Լուկաշինի փողոց 37/54 հասցեում նախատեսվող բենզալցակայանի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ 2-րդ հանրային լսումը: Հանդիպմանը մասնակցում էին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի, նախաձեռնող կողմի, Աջափնյակ համայնքի ղեկավարի տեղակալը և աշխատակիցները, Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչը, «Մայր Հայաստան» խմբակցության ավագանու անդամը, աշխատակիցները և այլն:

Շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչ՝ **Հ. Ֆրունզիկյանը** ողջունեց ներկաներին, ներկայացավ և խնդրեց ներկաներին ներկայանալ:

**Հ. Ֆրունզիկյանը** ներկայացրեց հանդիպման նպատակը, այնուհետև հայտնեց, որ Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի «ա». ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է փորձաքննության: Գնահատման հաշվետվությունը ուղղարկվել է տարբեր նախարարություններ և շրջակա միջավայրի մասնագիտական ստորաբաժանումներ որոնք իրենց առաջարկություններն ու դիտողություններն են ներկայացրել, փորձագետի կողմից փորձաքննվել է և ուղղարկվել է լրամշակման, որը լրամշակվել է նախաձեռնողի կողմից: Այնուհետև ներկայացրեց նախատեսվող աշխատանքների կատարման ընթացքում շրջակա միջավայրի վրա հիմնական բացասական ազդեցությունները կապված փոշու արտանետումների հետ, վառելիքի արտանետումները շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ, առաջացող թափոնների, աղմուկի և թրթռման հետ և այլն:

Ներկայացնելուց հետո խոսքը փոխանցեց նախաձեռնող կողմի ներկայացուցչին և խնդրեց մանրամասն ներկայացնի նախատեսվող գործունեությունը: **Ներկայացուցիչ Ա. Գալոյանը** ներկայացավ և ներկայացրեց բնակավայրում նախատեսվող աշխատանքները, ծավալները, ծանոթացրեց նախագծին և գործունեության իրականացման ընթացքում առաջացող ազդեցությունները շրջակա միջավայրի վրա, և դրանց նվազեցմանն միտված միջոցառումների շրջանակը:

**Հ. Ֆրունզիկյանը** հարց բարձրացրեց կանաչապատման նախահգծի, տնկվող ծառատեսակների, կոյուղու համակարգի վերաբերյալ և խնդրեց մանրամասն ներկայացնել:

**Ա. Գալոյանը** ներկայացրեց հավելեց որ տարածքի կողքով անցնում է կոյուղագիծը որին էլ միացվելու է:

**Հ. Ֆրունզիկյանը** հետաքրքրվեց նախատեսվող գործունեության տարածքի հողերի նպատակային նշանակության վերաբերյալ:

**Նախաձեռնողը** պատասխանեց որ համայնքային սեփականություն հանդիսացող հողեր են:

**Աջափնյակ վարչական շրջանի կոմունալ բաժնի պետը՝** հետաքրքրվեց նախատեսվող բենզալցակայանի մուտք գործելու ձևերը և հարցրեց արդյոք գլխավոր ճանապարհից դեպի նախատեսվող բենզալցակայանի միջև ընկած հողերը ձեզ են պատկանում:

**Նեկայացուցիչը** պատասխանեց, որ դա համայնքային հողեր են և ճանապարհը այդ հատվածով կլինի որը ելք կունենա դեպի գլխավոր ճանապարհ:

Այլ հարցեր չինչեցին **Հ. Ֆրունզիկյանը** շնորհակալություն հայտնեց ներկաներին և ամփոփեց հանդիպումը:

Հանրային լսումների պատասխանատու և վարող՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն «ՊՈԱԿ» ՝

«ՇՄԱՓԿ» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչ՝ Հ.Ֆրունզիկյան

Քաղաքացի/ներկայացուցիչ՝ Ա. Հարությունյան